«ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն
Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր խնդիր. կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Առարկան՝ Աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Նելլի Ավետիսյան

Ուսումնական հաստատություն՝ Գավառ քաղաքի Պապին Ղանդիլյանի անվան համար 2 միջնակարգ դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ, ԴՊՐՈՑՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....6

1.1. Բնապահպանական հիմնախնդիրները 21-րդ դարում..... 6

1.2. Բնապահպանական կրթության և դաստիարակության կարևորությունը դպրոցում8

ԳԼՈՒԽ 2. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 11

2.1. Դասավանդման մեթոդների ուսումնասիրություն..... 11

2.2. «Աշխարհագրություն» առարկայի 6-12-րդ դասարանների դպրոցական դասընթացում բնապահպանական թեմաների դասավանդումը 16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 20

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական թեմայի արդիականության հիմնավորում:

Ճանաչել բնությունը և ներդաշնակ ապրել բնության մեջ՝ չխաթարելով այն հավասարակշռությունը, որը հնարավորություն է տալիս մարդուն բնականոն և բանականորեն ապրել և ստեղծագործել տիեզերքի այս փոքրիկ անկյունում, որն է մեր Երկիր մոլորակը:

Բնության նկատմամբ կոնկրետ մարդու վերաբերմունքով կարելի է գաղափար կազմել նրա գիտակցական, բանական և կրթական մակարդակի մասին: Մտավորականը չի կարող չճանաչել բնությունը, առավել ևս շրջակա միջավայրը, որտեղ կան ձևավորված և կենսագոյության համար անհրաժեշտ բոլոր պայմաններն ու զարգացման հնարավորությունները:

Այս խնդիրների ծիրում էր, որ անհրաժեշտաբար ծնվեց բնապահպանությունը որպես գիտակարգ, ապա ներառվեց տարբեր գիտակարգերի շրջանակներում: Բնապահպանությունը գիտական մեթոդներով ուսումնասիրում է բնության կոնկրետ հատվածի, կոնկրետ պահին կենդանի և անկենդան բնության առարկաների և երևույթների կանոնակարգված և ներդաշնակ փոխհարաբերությունները, կատարում եզրակացություն, երևույթների բնական զարգացման վերջնարդյունքի մոդելավորում, սահմանում օրգանիզմների և էկոհամակարգերի կայուն զարգացման և գոյության հնարավոր առավել բարենպաստ արդյունք ստանալու ուղիները:

Բնապահպանության ձևավորման արշալույսին գրեթե բոլոր մեծ մտածողները նկատել են կարևոր մի երևույթ, որ բոլոր օրգանիզմները, նույնիսկ բարձրակարգերը և մարդը կախված են միջավայրից, որտեղ գոյություն ունեն: Այսօր, ներկայիս հարափոփոխ իրականության պայմաններում բնապահպանության հիմնախնդիրը չափազանց սուր է: Շարունակական պատերազմները, բնական աղետները, որոնք զուգորդվում են մարդկանց՝ բնության հանդեպ անպատասխանատու վերաբերմունքով հանգեցրել են նրան, որ բնությունը ենթարկվում է եռակի ճգնաժամային ազդեցության՝ կլիմայի փոփոխություն, աղտոտվածություն և կենսաբազմազանության կորուստ:

Վերջին տարիների շարունակական պատերազմների բացասական ազդեցությունն ահռելի է: Թեև բնապահպանական խնդիրները հատկապես սրվել են վերջին ժամանակներում, զինված հակամարտությունների ժամանակ շրջակա միջավայրի վնասը նույնքան հին երևույթ է, որքան ինքը պատերազմը: Վերջին տասնամյակների ընթացքում զինված հակամարտությունները հանգեցրել են ջրային աղբյուրների աղտոտման, պատերազմների ֆինանսավորման համար բնական ռեսուրսների աննախադեպ արդյունահանման, ռմբակոծությունների հետևանքով հողային և բնության այլ ռեսուրսների էական վնասի պատճառման:

Չնայած այն հանգամանքին, որ մենք՝ ուսուցիչներս, «Աշխարհագրություն» և այլ առարկաների դպրոցական դասընթացի շրջանակներում չենք կարող զսպել պատերազմները, սակայն բնապահպանական կրթության և դաստիարակության միջոցով կարող ենք կերտել պատասխանատու քաղաքացի, ով չի աղտոտի բնությունը, չի վնասի բնական օբյեկտները՝ այդպիսով որևէ կետում ընդհատելով բնության շարունակական վնասման շղթան:

Այսպիսով, «Աշխարհագրություն» առարկայի ուսուցչի՝ արդի ներերկրային և միջազգային իրադրության, բնական ռեսուրսների աղտոտվածության, կլիմայի փոփոխության պայմաններում պատասխանատու և պատրաստակամ քաղաքացի կրթելու և դաստիարակելու առաքելության կենսագործմամբ է պայմանավորված սույն թեմայի արդիականությունը և հրատապությունը:

Հետազոտության նպատակի և խնդիրների սահմանում: Հետազոտության հիմնական նպատակն է կատարել«Աշխարհագրություն» առարկայի շրջանակներում բնապահպանական կրթության և դաստիարակության հիմնադրույթների ուսումնասիրություն՝ թեմայի համատեքստում ուսումնական գործընթացի արդյունավետությանբարձրացմաննպատակով:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- դիտարկել բնապահպանական հիմնախնդիրները 21-րդ դարում,
- ուսումնասիրել բնապահպանական կրթության և դաստիարակության կարևորությունը դպրոցում,
- մեկնաբանել «Աշխարհագրություն» առարկայի դասավանդման մեթոդները,
- ներկայացնել «Աշխարհագրություն» առարկայի 6-12-րդ դասարանների դպրոցական դասընթացում բնապահպանական թեմաների դասավանդման գործընթացը, սկզբունքները:

Հետազոտության օբյեկտի և առարկայի սահմանում: Ընդհանուր առմամբ հետազոտության օբյեկտը իրադարձությունների դրսևորումն է «Աշխարհագրություն» առարկայի շրջանակներում բնապահպանական կրթության և դաստիարակությանպայմաններում, իսկ առարկան՝ որոշակի իրադարձությունների դրսևորման դեպքում (մեր դեպքում բնապահպանական տարրի ներդրումն է «Աշխարհագրություն» առարկայի շրջանակներում) ապահովված արդյունքները:

Հետազոտության իրականացման մեթոդի (մեթոդիկայի) ընտրություն: Հետազոտությանխնդիրներըլուծելունպատակովուսումնասիրություններկատարելուընթացքումկի րառվելենհետևյալգիտահետազոտականմեթոդները.

- վերլուծվել և ընդհանրացվել են «Աշխարհագրություն» առարկայի ուսուցմանմեթոդականմոտեցումների վերաբերյալ աշխատությունները,

- ուսումնասիրվել է «Աշխարհագրություն» առարկայի տարբեր դասարանների դասագրքերում բնապահպանության վերաբերյալ զետեղված նյութերը, գերակա թեմաները:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, ընդհանուր մասից, որը բովանդակում է 2 գլուխ, որոնցից յուրաքանչյուրը բովանդակում է երկուական ենթահարց, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 22 էջ:

ԳԼՈՒԽ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ, ԴՊՐՈՑՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Բնապահպանական հիմնախնդիրները 21-րդ դարում

Մարդն անխնա է բնության նկատմամբ, բնապահպանական հիմնախնդիրների մեծամասնությունն ուղղակի կամ անուղղակի կերպով մարդածին են: Բնապահպանական հիմնախնդիրները համաշխարհային նշանակության կարևորություն ունեն: Բնապահպանական հիմնախնդիրները բազմաթիվ են, սակայան առանձնանցվում է դրանց խումբ, որոնք պահանջում են հրատապ լուծում և ամբողջ աշխարհի մարդկանց համատեղ ջանքեր: Այլ կերպ դրանց անվանում ենք համամոլորակային բնապահպանական հիմնախնդիրներ.

1. Երկրագնդի անտառազրկումը: Այս չափազանց լուրջ բնապահպանական հիմնախնդիրը կարող է և տեղային, և տարածաշրջանային, և համամոլորակային նշանակություն ունենալ: Անտառ էկոհամակարգը բույսերի և կենդանիների զգալի մասի համար ապրելավայր է և նրա ոչնչացումը կհանգեցնի դրանց անդառնալի կորստին: Անտառները նաև հողաստեղծ և ջրապահպան գործոն են, կանոնավորում են տարածաշրջանի կլիման, ջրային հաշվեկշիռը: Բացի այդ, անտառը Երկրի թոքերն է կամ թթվածնի գործարանը, իսկ ներկայումս պատերազմական գործողությունների արդյունքում ոչնչացվում է այդ «գործարանը»:

2. Հողերի վատթարացումը և էրոզիան: Գյուղատնտեսական հանդակներից բերքի հետ միասին մարդը հեռացնում է հանքային և օրգանական նյութերի մի զգալի քանակ՝ աղքատացնելով հողը: Հողի արդյունավետ, գիտականորեն հիմնավորված մշակումը կարող է երկար ժամանակ պահպանել հողի պտղաբերելու ներուժը: Հողի վատթարացումը հողի հնարավոր բերքատվության անկումն է: Էրոզիան հողի վերին շերտի քայքայման, հողմահարման կամ ջրի հոսանքով լվացման, հեռացման գործընթացն է: Հողի բնական էրոզիան ընթանում է խիստ դանդաղ, մինչդեռ մարդու գործունեությունը զգալիորեն արագացնում է այն:

3. Երկրագնդի մթնոլորտի աղտոտումը և օզոնի շերտի քայքայումը: Արդյունաբերության, ջերմաէլեկտրակայանների, տրանսպորտային միջոցների արտանետումները, կենցաղային աղբի և այլ օրգանական նյութերի հսկայական զանգվածների փտումից առաջացած գազերը աղտոտում են Երկրի օդային ավազանը: Սա կարող է ունենալ ինչպես տեղային, այնպես էլ համամոլորակային բացասական ներգործություն:

4. Անապատացումը: Անապատացման պատճառներն են հողերի էրոզիան, վատթարացումը, անտառազրկումը: Երկրագնդի վարելահողերը տարեկան 60000 քկմ-ով նվազում են: Դա ավելի քան երկու անգամ գերազանցում է Հայաստանի տարածքը:

5. Քաղցրահամ ջրերի որակի վատացումը: Երկրագնդի ջրային պաշարների մեջ, ըստ տարբեր աղբյուրների տվյալների, քաղցրահամը ջուրը կազմում է 2.7-3.5%, իսկ դրա 70%-ից ավելին կենտրոնացված է լեռների անմատչելի գագաթների և բևեռների սառցադաշտերում: Մեր օգտագործման համար պիտանի ջուրը պետք է անընդհատ հոգածության առարկա լինի: Մինչդեռ գետերն ու լճերն են լցվում կենցաղային և արդյունաբերական կեղտաջրերն ու աղբը: Վերոհիշյալ բոլոր գործոնների ազդեցությունը կարելի է անվանել շրջակա միջավայրի որակի վատացում, որը գործում է բումերանգի պես՝ իր հետևից բերելով մարդկանց կենսապայմանների և առողջության վատացում, գենետիկական ալերգիկ, մինչև այժմ անհայտ նոր հիվանդությունների առաջացում, ինչը նույնպես համամոլորակային բնապահպանական հիմնախնդիր է:

6.Համաշխարհային օվկիանոսի աղտոտումը: Համաշխարհային օվկիանոսը երկրագնդի կլիմայաձևավորման կարևորագույն գործոն է, մայրցամաքների միջև հաղորդակցության ուղի: Այն կենդանիների և բույսերի տեսակների ապրելավայր է և կարևոր էկոհամակարգ, որտեղից միլիոնավոր տարիներ առաջ երկրագնդի վրա սկիզբ է առել կյանքը: Տագնապ է հարուցում այն փաստը, որ ավելի ու ավելի հաճախ է համաշխարհային օվկիանոսը օգտագործվում որպես աղբավայր: Առանց որևէ վերահսկողության թունավոր նյութերով տարողությունները թափում են օվկիանոսի համեմատաբար մեծ խտություն ունեցող վայրերը՝ առանց գնահատելու ստորջրյա հոսանքների ուժը և ուղղությունը: Մինչդեռ տարաների քայքայումից հետո թունավոր նյութերը կարող են աղտոտել հսկայական տարածություններ:

7.Կենսաբանական տեսակների բազմազանության հիմնախնդիրներ: Բնության մեջ ամեն ինչ ներդաշնակ է և կատարյալ: Այս կատարելության մեջ կա մի կարևոր հատկանիշ. յուրաքանչյուր բույս, յուրաքանչյուր կենդանի, անկենդան աշխարհի ցանկացած նյութ և ապար իրենց տեղն ունեն բնության մեջ: Այդ տեղը ոչ թե պարզապես մաթեմատիկական կոորդինատներով նշվող հասցե է, այլ նաև որոշակի դեր է, որոշակի գործառույթ, որն ունի այդ սուբյեկտը բնապահպանական համակարգում: Այդ տեղը, այդ դերը, գործառույթը բնորոշվում է բնապահպանական խորշ հասկացությամբ: Բնությունը բազմազանության շնորհիվ կենդանի է, որքան քիչ են տեսակները, այնքան նրանց գոյությունն ավելի է վտանգված: Կլիմայական փոփոխություններից, հիվանդություններից հեշտությամբ կարող են ոչնչանալ նաև սակավաթիվ վերապրած տեսակներ: Բույսերի և կենդանիների անհետացող տեսակների համար ստեղծվել են Կարմիր գրքեր[1]:

Բնապահպանական հիմնախնդիրներից առաջնային համարվող շրջակա միջավայրի աղտոտումը մարդկանց, բույսերի և կենդանիների կենսագործունեության վրա բացասաբար

[1] Кузнецова Н. И. Глобальные проблемы современности как угроза экологическойбезопасностиРоссии // ИзвестияЮго-Западногогосударственногоуниверситета. Серия: Историяиправо. 2022. Т. 12, № 3. С. 106-115.

ազդող նյութերի թույլատրելի քանակի գերազանցումն է միջավայրում: Տարբերում են շրջակա միջավայրի բնածին և մարդահարույց աղտոտիչներ:

1.2. Բնապահպանական կրթության և դաստիարակության կարևորությունը դպրոցում

Ժամանակակից դպրոցի խնդիրներից է անձի բնապահպանական մշակույթի ձևավորումը: Բնապահպանական մշակույթը բնության նկատմամբ սովորողի գիտակցված վերաբերմունքն է, որն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունն ու զարգացումը, նպաստում է բարենպաստ պայմանների ստեղծմանը մարդու կյանքի և գործունեության համար: Բնապահպանական մշակույթի կարևոր բաղադրամաս են համարվում՝

1.գիտելիքները մարդ-բնություն փոխհարաբերությունների վերաբերյալ,

2. այդ փոխհարաբերությունները գնահատելու կարողությունը,

3. համոզմունքը բնության ռացիոնալ օգտագործման ու բնապահպանման անհրաժեշտության վերաբերյալ:

Բնապահպանական կրթությունը բնապահպանական գիտելիքների, կարողությունների, հմտությունների, սովորությունների համակարգի ձևավորման գործընթաց է, որն անձի բնապահպանական մշակույթի հիմք է հանդիսանում: Բնապահպանական և աշխարհագրական կրթությունները սերտ փոխկապակցված են, դրանց նպատակներն ու խնդիրներնը կայանում են հետևյալում՝

1) ձևավորել աշակերտների մոտ գիտելիքներ Երկրի բության և զարգացման հիմնական օրենքների մասին.

2) ձևավորել գիտելիքներ և հմտություններ մարդ-բնություն փոխհարաբերության հետևանքների կանխատեսմանևգնահատման համար.

3) ձևավորել բնապահպանական մտածողություն, որի էությունը Երկրի վրա ընթացող պրոցեսների փոխկապակցված ընկալումն է:

Բնապահպանական կրթությանը զուգահեռ պետք է կազմակերպվի սովորողի բնապահպանական դաստիարակությունը: Բնապահպանական դաստիարակությունը որոշակի պայմանների ստեղծումն է անձի կողմից բնապահպանական մշակույթի յուրացման համար, որը ձևավորվել է հասարակության մեջ և պետք է փոխանցվի սերունդներին: Բնապահպանական կրթությունը դպրոցում կրում է միջառարկայական բնույթ և բնապահպանական հարցերը ուսումնասիրվում են բոլոր բնագիտական առարկաների՝աշխարհագրության, կենսաբանության, ֆիզիկայի, քիմիայի շրջանակներում: Կենսաբանության շրջանակներում ուսումնասիրվում են կենդանի օրգանիզմների և շրջակա միջավայրի փոխհարաբերությունները: Քիմիայի

շրջանակներում դիտարկվում են քիմիական տարրերի ազդեցությունը մթնոլորտի և ջրոլորտի վրա, պարարտանյութերի ազդեցությունը հողի, բույսերի, կենդանիների վրա: Ֆիզիկայի դասընթացում սովորողներն ուսումնասիրում են ռադիոակտիվ նյութերի ազդեցությունը կենդանի օրգանիզմների վրա:

Աշխարհագրական գիտության համար հետազոտության բնապահպանական սկզբունքը ավանդական դարձած ուղղություն է, որը կոչվում է կոնստրուկտիվ աշխարհագրություն: Այն արդի ժամանակաշրջանում ստացել է գեոէկոլոգիա անվանումը: Գեոէկոլոգիան ուսումնասիրում է մարդբնություն փոխհարաբերությունների փոխադարձ կապերը, այդ կապերից առաջացած խնդիրները, արտադրական և բնական համալիրների փոխադարձ կապերը, բնատեխնիկական համակարգի ստեղծման հիմնահարցերը և բազմաթիվ այլ բնապահպանական խնդիրներ:

Դպրոցական աշխարհագրության բնապահպանական բովանդակության կարևոր բաղադրամաս են համարվում բնապահպանական կարողությունները՝

1. կարողանալ բացատրել բնական ռեսուրսների յուրահատկությունները,

2. գնահատել դրանք,

3. կանխատեսել բնության վրա ունեցած մարդու ներգործության հետևանքները,

4. կարողանալ կազմել սխեմատիկ բնապահպանական բովանդակության քարտեզներ տարածքի փոքր հատվածներ համար և այլն[2]:

Գեոբնապահպանական գիտելիքները սովորողների մոտ ձևավորվում են դպրոցական աշխարհագրության ողջ դասընթացի ուսումնասիրման ընթացքում: Ուսումնասիրում են բնության զարգացման հիմնական օրինաչափությունները, անթրոպոգեն գործոնի ազդեցությունը տարբեր մայրցամաքների բնության վրա, բնապահպանական միջոցառումների (արգելոցների, արգելավայրերի, ազգային պարկերի) կազմակերպումը և այլն: Բնապահպանական կրթության համար մեծ նշանակություն ունեն ինքնուրույն գործնական աշխատանքները, որոնք ներառում են առաջադրանքների երեք տեսակ՝

1. դիտարկել և բնութագրել մարդու ազդեցության տակ գտնվող բնական օբյեկտը,

2. բացատրել բնապահպանական խնդրի էությունն ու բացահայտել պատճառահետևանքային կապը «հասարակություն-բնություն» համակարգում,

3. առաջարկել բնապահպանական խնդրի լուծման որևէ ուղի, ապացուցել և պաշտպանել սեփական տեսակետը[3]:

---

[2]Беловолова, Е. А. География: формирование универсальных учебных действий: 5-9 классы: Методическое пособие / Е. А. Беловолова. — М.: Вентана-Граф, 2015. — 224 с., с. 49.

[3]Гакаев, Р. А. Образовательные технологии на уроках географии в условиях современной школы // Образование и воспитание. — 2015. — № 3 (3). - С. 4- 7.

Ինքնուրույն աշխատանքների բովանդակության բարդեցումը պետք է սկսվի բնապահպանական խնդրի պատճառի և բնույթի նկարագրումից և ընթանա մինչև նրա լուծման եղանակների կանխատեսումը, մտավոր գործողությունների բարդեցումը՝ պատճառահետևանքային կապերի բացահայտումից մինչև օրինաչափությունների պարզաբանումը, ուսուցման եղանակների բարդեցումը համապատասխանաբար, պետք է ընթանա խնդրի նկարագրումից մինչև հետևանքների կանխատեսումը, խնդրի լուծումը և ի վերջո բնության ռացիոնալ օգտագործման նկատառումներով տարածքի զարգացման սեփական մոդելի նախագծումը:

ԳԼՈՒԽ 2. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

2.1. Դասավանդման մեթոդների ուսումնասիրություն

Ներկայումս, ՀՀ հանրակրթության ոլորտում, ավելի քան երբևէ, աշխարհագրության ուսուցումը ձեռք է բերել հույժ կարևոր նշանակություն: Այն սովորողին հիմնարար գիտելիքներ է տալիս բնության և մարդկային գործունեության բոլոր բնագավառների վերաբերյալ, զարգացնում է երևույթները և փաստերը աշխարհագրական միասնականության մեջ դիտարկելու ունակություն, ընդլայնում է նրանց աշխարհաճանաչողականությունը, գիտակցված սեր է առաջացնում հայրենիքի, բնական միջավայրի և մարդկանց նկատմամբ: Լինելով չափազանց զգայուն գիտություն աշխարհում կատարվող փոփոխությունների նկատմամբ՝ այն բավականին դժվարացնում է աշխարհագրության ուսուցչի գործը: Պետք է փաստել, որ ՀՀ-ում կրթական բարեփոխումներով պայմանավորված՝ վերջին տարիներին աշխարհագրության ուսուցչի աշխատանքը ավելի է բարդացել:

Առաջնային ենք համարում նշել, որ «Աշխարհագրություն» առարկան դասավանդող յուրաքանչյուր ուսուցիչ, անկախ սեփական նախապատվություններից, ուսումնական գործընթացը կազմակերպում է հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան: Հանրակրթության պետական չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է սովորողներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ), ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը[4]:

Չափորոշչով սահմանված յուրաքանչյուր ուսումնական բնագավառ ներառում է իր ուղղվածությանը համապատասխան մեկ կամ մի քանի ուսումնական առարկաներ և (կամ) դասընթացներ: Ուսումնական պլանում կարող են ներառվել առարկաներ, որոնց բովանդակությունն առնչվում է մի քանի ուսումնական բնագավառների. *«Հայրենագիտություն» և «Հասարակություն, հասարակական գիտություններ» բնագավառները հանրակրթական ընդհանուր պետական ծրագրի 5-6-րդ դասարաններում ներկայացվում են Հայաստանի և հայ*

[4] Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն որոշումը. Հասանելիությունը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 (Վերջին մուտքը՝ 22.09.2023., ժամը 19:24)

ժողովրդի պատմությունը, մշակույթը և կրոնը, աշխարհագրությունը, հասարակական կյանքի ոլորտները ներկայացնող մեկ ինտեգրված առարկայով, 7-12-րդ դասարաններում՝ առանձին առարկաներով:

Հաջորդ իրավական ակտը, որով առաջնորդվում է «Աշխարհագրություն» առարկան դասավանդող յուրաքանչյուր ուսուցիչ առարկայական չափորոշիչն է: Առարկայական չափորոշչի մեխ համարվող գաղափարը հետևյալն է. *«Հանրակրթական դպրոցում «Աշխարհագրություն» ուսումնական առարկայի ուսուցումը պայմանավորված է այդ առարկայի աշխարհայացքային, համամշակութային, կրթաճանաչողական նշանակությամբ: Բացի այդ, աշխարհագրությունն, այլ ուսումնական առարկաների հետ միասին, նպաստում է սովորողների հայրենասիրական դաստիարակության ձևավորմանն ու բնապահպանական արժեքային համակարգի զարգացմանը: Աշխարհագրությունը սովորողներին տալիս է աշխարհագրական գիտելիքները կյանքում կիրառելու հմտություններ, ինչպես նաև ձևավորում է նրանց համակարգված աշխարհագրական մտածողությունը».*[5]

Առարկայական չափորոշչով սահմանված են ուսումնասիրվող դասընթացի բովանդակության մեջ, գիտական աշխարհայացքի ձևավորման հիմքերը, որոնց թվում է սովորողի կողմից բնապահպանական միջոցառումների պլանավորմանը և իրականացմանը մասնակցելը: Իսկ արդեն ավագ դպրոցի համար սահմանված է, որ սովորողները դասընթացի արդյունքներով պետք է կարողանան արտահայտել տեսակետ և ունենալ սեփական դիրքորոշում՝ տեղական, տարածաշրջանային և համամոլորակային մակարդակներում բնօգտագործման և բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ, ինչպես նաև գիտակցեն բնության հանդեպ պատասխանատու, հոգատար և ոչ սպառողական վերաբերմունքի՝ բնապահպանական մշակույթի ձևավորման անհրաժեշտությունը:

Վերը բերված կարողունակությունների ձևավորումը հնարավոր է, եթե ուսուցիչըառարկայի դասավանդումը կազմակերպում է համապատասխան մեթոդների և հնարների ընտրությամբ: «Աշխարհագրություն» առարկայի դասավանդման գործընթացի արդյունավետ կազմակերպումը առարկայի ողջ ուսումնական գործընթացի արդյունավետության երաշխիքն է: Եթե «Աշխարհագրություն» առարկայիդասավանդումը համակարգված չի իրականացվում, ապա սովորողների բարձր առաջադիմության և բնության հանդեպ պատասխանատու անհատի ձևավորումը մնում է չհաղթահարված:

[5]«Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Աշխարհագրություն» առարկայի 7-8-րդ, 10-12-րդ և «Հայաստանի աշխարհագրություն» առարկայի 9-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 30 մարտի 2023 թվականի N 24-Ն հրամանը.Հասանելիությունը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=176078 (Վերջին մուտքը՝ 22.09.2023., ժամը 20:19)

Կազմակերպումը բավականին բարդ գործընթաց է և սկսվում է ուսումնական համալիրների ընտրությունից: Ուսումնական համալիրներ ասելով սովորաբար հասկանում ենք ուսումնամեթոդական գրականությունը, զննական և այլ միջոցները «Աշխարհագրություն» առարկայի դասավանդման յուրաքանչյուր դասի վերաբերյալ: Այս հասկացությունների մեջ մտնում են՝

1. Ուսումնական ձեռնարկներ (ուսումնական օժանդակ ձեռնարկներ, քրեստոմատիաներ, ընթերցանության համար նախատեսված գրքեր):

2. Մեթոդական գրականություն:

3. Գիտական, գիտահանրամատչելի և գեղարվեստական գրականություն (մենագրություններ, ընթերցանության համար նախատեսված գրքեր):

4. Ուսումնական զննական միջոցներ (քարտեզներ, տպագիր, ծավալուն, էկրանային և ձայնային)[6]:

Այս ամենի ընտրությունից հետո անցում է կատարվում հնարների և մեթոդների հնարավոր տարբերակների դիտարկմանը: Ինչպես ցանկացած այլ ուսումնական առարկա, այնպես էլ «Աշխարհագրություն» առարկայի ուսուցման կազմակերպումը ենթադրում է որոշակի հնարների և մեթոդների կիրառում, որոնց ճիշտ մշակումը հնարավորություն կընձեռի ուսուցչին առավել արդյունավետ կազմակերպել ուսուցման գործընթացը:

Առաջնահերթ ենք համարում ընդգծել, որ «Աշխարհագրություն» առարկայի ուսուցման կազմակերպման հնարների և մեթոդների ընտրության համատեքստում ուսուցիչը պետք է դրսևորի աշակերտակենտրոն մոտեցում: Հաջորդ մոտեցումը, որի հիմքով ուսուցիչը պետք է ընտրի ուսուցման հնարներն ու մեթոդները, դա ժամանակի հրամայականն է: «Աշխարհագրություն» առարկայի ուսուցիչը մշտապես պետք է ընտրի այնպիսի հնարներ և մեթոդներ, որոնք թույլ կտան ամեն հնարի և մեթոդի շրջանակներում առավելագույնս ներկայացնել համեմատականներ տվյալ ժամանակաշրջանին բնորոշ իրադարձությունների հետ[7]: Օրինակ, բնապահպանական հիմնախնդիրները մեկնաբանել Արցախյան պատերազմների լույսի ներքո:

Հնարների և մեթոդների ընտրության համատեքստում ուսուցիչը պետք է առաջնորդվի նաև դրանց՝ նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաներ բովանդակելու փաստով: Նորարարական մեթոդները, որոնք առավելապես հարմարեցված են նորագույն տեխնոլոգիաներին, պայմանավորում են ուսուցման որակը: Սա շատ կարևոր է «Աշխարհագրություն» առարկայի

[6]Ивенищева Н.А. Методика обучения географии: практикум для академического бакалавриата.- Оренбург: ИП Самарцев В.М., 2017., 96 с., с. 29.
[7]Палманова Ж. Современные инновационные методы преподавания географии в общеобразовательных школах: "Экономика и социум" №1(80) ч.2 2021., с. 310.

շրջանակներում, քանի որ այս տարի «Աշխարհագրություն» դասագրքում առաջին անգամ ներդրվել է QR կոդերի գաղափարը, որն աշակերտին հնարավորություն է տալիս ինքնուրույն ստուգելու աշխարհագրական իր գիտելիքները, ուսուցչի օգնությամբ միմյանց հետ համադրելու տեսական և կիրառական գիտելիքները: Ուսուցիչն անձամբ պետք է բավականաչափ տեղեկացված լինի նորագույն տեխնոլոգիաներից, որպեսզի կարողանա կազմակերպել QR կոդերով ներկայացված փոքրիկ տեսաֆիլմերի համատեղ դիտում և քննարկում դասարանում[8]:

Մեթոդասելովհասկանումենքայնուղին, որովհնարավորէհասնելհետազոտությաննպատակներիկատարմանը: Մեթոդաբանությունընենթադրումէայնպիսիմիջոցներիամբողջությանառկայություն, որիմիջոցովմենքճանաչումենքուսումնասիրվողերևույթընդհիտարկումայնհամակողմանիորեն [9] : Մեթոդ ասելով ըմբռնվում է գործունեության եղանակների և հնարների յուրահատուկ համակարգ, որն ապահովում է գործունեության խնդիրների իրականացումը: Այն ուսուցչի համար դասավանդման, իսկ աշակերտների համար գիտելիքներ, կարողունակություններ, հմտություններ յուրացնելու եղանակն է, այսինքն՝ ուսուցչի և աշակերտների առանձնահատկությունների դրսևորումը ուսուցման գործընթացում: Ուսուցման գործընթացում բացի մեթոդից կիրառվում է նաև հնարը, որը մեթոդի բաղկացուցիչ մասն է կազմում[10]: Օրինակ, ինչպես ձեռք բերված բնապահպանական գիտելիքները ճիշտ կիրառել պրակտիկայում:

«Աշխարհագրություն» առարկայի շրջանակներում հնարների և մեթոդների ընտրության հարցում անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ չափանիշներով.

- հնարների և մեթոդների համապատասխանությունը դասավանդման սկզբունքներին.
- հնարների և մեթոդների համապատասխանությունը ուսուցման նպատակներին և խնդիրներին.
- հնարների և մեթոդների համապատասխանությունը կոնկրետ թեմայի բովանդակությանը,
- հնարների և մեթոդների համապատասխանությունը դպրոցականների կրթական կարողունակություններին՝ տարիքին, պատրաստվածության մակարդակին, դասարանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների առկայությամբ,
- համապատասխանություն հենց ուսուցիչների կարողունակություններին[11]:

[8]Վարդանյան Թ., Պոտոսյան Ա., Ասատրյան Վ., Հակոբյան Լ. «Աշխարհագրություն: 7-րդ դասարանի դասագրքի մեթոդական ուղեցույց».- Երևան, «Աստղիկ» գրատուն, 2023., 69 էջ, էջ 3:

[9]Методологиянаучныхисследований: учебноепособиедляучрежденийвысшегообразования / Е.В. Пустынникова—Ульяновск, УлГУ, 2017., 129 с., с. 43.

[10]Савин Н.В. Педагогика. М., 2018., 276 с., С.217.

[11]Буланова-Топоркова Н.А., Духанева С.В. Педагогические технологии. М.: Просвет, 2014., 244 с., с. 59.

Այսչափանիշներիհիմքով «Աշխարհագրություն» առարկայի ուսուցման կազմակերպման համար ընտրվում են հետևյալ արդյունավետ մեթոդները՝ խոսքային, զննական, գործնական մեթոդներ:

*Խոսքային մեթոդներ:*Խոսքային մեթոդների դիդակտիկական հիմնական ֆունկցիան բառատրամաբանական, վերացարկված ընդհանրացված և համակարգված գիտելիքներ հաղորդելն է սովորողներին, խոսքի ձևավորումն է: Այսինքն աշխատանքն է դասագրքի և քարտեզի հետ: «Աշխարհագրություն» առարկայիուսուցիչները խոսքային մեթոդների մեջ ներառում են պատմելու, զրույցի, ուսումնական բանավեճի մեթոդները:

«Աշխարհագրություն» առարկայի ուսուցչի կողմից պատմելը սկսվում է ներածությունով և ավարտվում է ամփոփումով: Ներածական խոսքում ուսուցիչը հաղորդում է ուսումնասիրվող նյութի՝ թեմայի բովանդակությունը, այն կապում է նախորդ թեմայի հետ, նշում թեմայի նշանակությունը, ուսումնասիրության նպատակը: Իր հաղորդած գիտելիքները հիմնավորում է օրինակներով, գիտական փաստերով, համապատասխան նկարագրդումներով (ցուցադրումներով): «Աշխարհագրություն» առարկայի ուսուցիչը երբեմն ընդհատում է իր շարադրանքը, աշակերտին մասնակից դարձնում նոր նյութի հաղորդմանը, ակտիվացնում նրանց ճանաչողական գործունեությունը: Պատմելու ժամանակ ուսուցիչը ներկայացնում է տեղեկությունը՝ փորձելով չպարտադրել իր տեսակետը, որպեսզի սովորողը կարիք զգա մտածելու նյութի շուրջ և հանգելու սեփական եզրակացությունների: Պատմում մեթոդի կիրառման արդյունավետությունը ենթադրում է ուսումնական նյութի համակողմանի յուրացում, դիտազննական պարագաների, ուսուցման տեխնիկական միջոցների ճիշտ ընտրություն և այլն:

Զրույց մեթոդի հիմնական գործառությունը սովորողի անձնական փորձի ակտիվացումն է, նրան «Աշխարհագրություն» առարկայի շրջանակներում նոր գիտելիքներ հաղորդելը կամ նոր գիտելիքների բացահայտման տանելը: Զրույցի հիմնական մեթոդական հնարը հարցեր առաջադրելն ու դրանց պատասխանները ձևակերպելն է: Մանկավարժի վարպետությունը կայանում է նրանում, որ կարողանա առաջարկել այնպիսի հարցեր, որոնք օգնեն սովորողներին կռահել պատասխանը, դրանք ճիշտ ձևակերպել և առաջադրել նոր հարցեր:

Ուսումնական բանավեճը խոսքային մեթոդներից է և կարևոր նշանակություն ունի սովորողների իմացական հետաքրքրությունները խթանելու գործում: Բանավեճի ժամանակ աշակերտերն արտահայտում են իրենց կարծիքները, համոզմունքները, տեսակետները, գնահատում իրենց և ընկերների գիտելիքների, կարողունակությունների, հմտությունների չափը, զարգացման աստիճանը:

Դասի ընթացքում քարտեզի աշխատանքը սկսվում է քարտեզի ներկայացմամբ՝ անվանումը, մասշտաբը, պայմանանշանները, պրոյեկցիայի առանձնահատկությունները: Ուսուցիչը պետք է սովորեցնի քարտեզի հետ աշխատելու կանոնները:

*Զննական մեթոդներ:*Աշխարհագրության ուսուցման դիտազննական պարագաներն են՝ նկարները, ֆոտոնկարները, հատուկ ուսումնական նպատակով ստեղծված պաստառները, դիապոզիտիվները, դիտաֆիլմերը, կինոֆիլմերը, հավաքածուները, աշխարհագրական մոդելները:

*Գործնական մեթոդներ.*Գործնական մեթոդների հիմնական ֆունկցիան սովորողների ձեռք բերած գիտելիքների կիրառումը, դրանց գործուն բնույթ հաղորդելը, կարողունակությունների ու հմտությունների ձևավորումն է[12]: Գործնական մեթոդների թվին «Աշխարհագրություն» առարկայի ուսուցիչը դասում է վարժությունները, գործնական աշխատանքները, լաբորատոր աշխատանքները, ճանաչողական խաղերը:

2.2. «Աշխարհագրություն» առարկայի 6-12-րդ դասարանների դպրոցական դասընթացում բնապահպանական թեմաների դասավանդումը

Բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ դասանյութեր զետեղված են «Աշխարհագրություն» առարկայի 6-12 դասարանների բոլոր դասագրքերում: Սովորողն իր ուսումնառության նախորդ տարիների ընթացքում այլ առարկաների շրջանակներում արդեն իսկ ստացել է անհրաժեշտ գիտելիքներ Երկիր մոլորակի առանձին ոլորտների վերաբերյալ, մասնավորապես, ուսումնասիրել է քարոլորտը, ջրոլորտը, մթնոլորտը, կենսոլորտը, դրանցում տեղի ունեցող ֆիզիկաաշխարհագրական երևույթները, դրանց միջև գոյություն ունեցող կապը և կարող է շարունակել իր ճամփորդությունն աշխարհագրության տեղեկատվական հորձանուտում:

«Աշխարհագրություն» առարկայի 6-րդ դասարանի դասագրքում բնապահպանական հիմնախնդիրների հիմնադրույթներն են ուսումնասիրվում: Սովորողը ծանոթանում է առանձին մայրցամաքների բնական, կլիմայական, ջրոլորտի, հողաբուսական և կենդանական աշխարհի առանձնահատկություններին, ուսումնասիրում է օվկիանոսները[13]: Ուսուցիչը պետք է կարողանա յուրաքանչյուր մայրցամաքին անդրադառնալիս նշել այն բնապահպանական խնդիրները, որոնք գերակա են տվյալ պահին, տվյալ մայրցամաքում: Բնապահպանական խնդիրներն առանձնացնելիս ներգրավել սովորողներին և շեշտը դնել կլիմայական փոփոխությունների, բնական աղետների, ջրի աղտոտման, պատերազմական ներազդեցությունների վրա:

«Աշխարհագրություն» առարկայի 7-րդ դասարանի դասագրքում բնապահպանական հիմնախնդիրների հիմնադրույթներն ուսումնասիրվում են 3-րդ, այն է «Եղանակ և կլիմա:

[12]Методика преподавания обществоведческих дисциплин: учебное пособие; авт.-сост. Т.И. Барсукова. – Ставрополь: СКФУ, 2016. – 189 с., с. 49.
[13]Հովսեփյան Ա.Ա., Գրիգորյան Ա.Թ., Մանասյան Մ.Գ. «Աշխարհագրություն 6». Հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք, Եր., «Աստղիկ» գրատուն, 2023., 160 էջ (կատարվել է գրքի ամբողջական դիտարկում)

Աշխարհագրական գոտիականություն և զոնայականություն», 6-րդ, այն է «Բնական պայմաններ և ռեսուրսներ», 7-րդ, այն է «Համաշխարհային տնտեսություն» թեմաների շրջանակներում[14]: Եթե առաջին 2 թեմաների շրջանակներում սովորողին մատուցվում է արդի կլիմայական և բնական պայմանների վերաբերյալ տեղեկատվություն և համեմատական կարող է տարվել նախկին իրադրության հետ՝ ընդգծելով բնապահպանական խնդիրների առաջացումը, ապա համաշխարհային տնտեսության ուսումնասիրության համատեքստում ուսուցիչը, ներգրավելով աշակերտներին, պետք է սահմանի տնտեսության բոլոր ճյուղերի հնարավոր բացասական ազդեցությունը բնության վրա: Օրինակ, երբ քննարկվում է քիմիական արդյունաբերությունը, պետք է անպայմանորեն խոսել թափոնների բնապահպանական վնասների մասին:

«Աշխարհագրություն» առարկայի 8-րդ դասարանի դասագրքում բնապահպանական հիմնախնդիրների հիմնադրույթներ չեն ուսումնասիրվում: Դասագիրքը մեծամասամբ բովանդակում է տնտեսության ուսումնասիրություններ, սակայն ներկայացվում են երկրներին բնորոշ բնական պայմանները և ռեսուրսները[15]: Հնարավորության դեպքում ուսուցիչը կարող է առանձին երկրների դեպքում ներկայացնել ակնառու բնապահպանական հիմնախնդիրներ:

«Աշխարհագրություն» առարկայի 9-րդ դասարանի դասագրքում բնապահպանական հիմնախնդիրների համալիր դիտարկմանը նվիրված է մեկ ամբողջ գլուխ: Այն զետեղված է «Աշխարհագրություն» առարկայի 9-րդ դասարանի 1-ին մասում և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության բնությունը, առկա վիճակը և արդի խնդիրները[16]: Չնայած այն հանգամանքին, որ բնապահպանական կոնկրետ խնդիրներին հատկացված է ընդամենը 3 էջ, միևնույն է, ուսուցիչը պետք է աշակերտների հետ քննարկի նրանց վարքը ՀՀ բնապահպանական խնդիրների հաղթահարման համատեքստում: Նա պետք է կարողանա աշակերտին միտել այն գիտակցմանը, որ նրա առօրյա կենսագործունեությունից է կախված ՀՀ բնության ապագան:

«Աշխարհագրություն» առարկայի 10-րդ դասարանի դասագրքում բնապահպանական հիմնախնդիրների հիմնադրույթներ չեն ուսումնասիրվում, սակայն ուսուցիչը հնարավորություն ունի դրանց անդրադառնալ 6-րդ թեմայի շրջանակներում, այն է «Աշխարհագրական թաղանթի կառուցվածքը», որի շրջանակներում կարող է քննարկել ջրի աղտոտվածությունը, մթնոլորտում առկա վտանգները, օդի աղտոտվածություն[17]:

---

[14]Վարդանյան Թ., Պոտոսյան Ա., Ասատրյան Վ., Հակոբյան Լ. «Աշխարհագրություն»: Դասագիրք 7-րդ դասարանի համար.- Եր,: «Աստղիկ» Գրատուն, 2023., 176 էջ (կատարվել է գրքի ամբողջական դիտարկում)

[15]Մանասյան Մ., Մարգարյան Ռ., Հովսեփյան Ա., Հովհաննիսյան Գ. «Աշխարհագրություն (Հասարակական աշխարհագրություն: Տարածաշրջաններ և պետություններ)»: Հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրք: Մաս 1 և Մաս 2, Եր., «Մանմար», 2020., 112 էջ և 120 էջ (կատարվել է դասագրքերի ամբողջական դիտարկում)

[16] Մանասյան Մ. «Աշխարհագրություն (Հայաստան)»: Հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի դասագիրք: Մաս 1, Եր., «Տիգրան Մեծ», 2020., 112 էջ (կատարվել է դասագրքի ամբողջական դիտարկում)

[17]Մանասյան Մ., Վարդանյան Թ., Հովսեփյան Ա., Գրիգորյան Ա., Հովհաննիսյան Գ., Պոտոսյան Ա. «Աշխարհագրություն: 10-րդ դասարան» Դասագիրք, Երևան, «Զանգակ» Հրատ., 2017., 224 էջ(կատարվել է դասագրքի ամբողջական դիտարկում)

«Աշխարհագրություն» առարկայի 11-րդ դասարանի դասագրքում բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրությանն էական տեղ է հատկացված: Մասնավորապես, 7-րդ թեմայի՝ «Բնության և հասարակության հարաբերությունները»[18] շրջանակներում դիտարկվում է բնական միջավայրի բնապահպանական հավասարակշռությունը, դրա խախտման պատճառները և հետևանքները, շրջակա միջավայրի մարդածին աղտոտումը, դրա աղբյուրները և տեսակները, ընդերքի, հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, մթնոլորտի, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանումը: Այստեղ ուսուցչի ձեռքում հսկայական գործիքակազմ է դաստիարակել պատասխանատու անհատ, ով ամեն կերպ փորձելու է իր կենսագործունեությունը մաքրել բնության համար վտանգավոր գործողություններից:

Բնապահպանական խնդիրներին նույնական էական նշանակություն է տրված 12-րդ դասարանի դասագրքում[19]: Մարդկության համամոլորակային հիմնախնդիրների թվում նշվում են նաև բնապահպանական խնդիրները՝ վերջնականապես ձևավորելով դեպի հասարակություն ճանապարհվող անհատի բնապահպան կերպարը:

«Աշխարհագրություն» առարկայի բոլոր դասարանների դասընթացներն անհրաժեշտ է սովորողներին դասավանդել ժամանակակից աշխարհագրության և մանկավարժության նվաճումների հաշվառմամբ և զուգորդմամբ: Դասավանդման մեթոդի ընտրությունն ակնհայտ է, որ պայմանավորված է շարադրված նյութի բովանդակությամբ, ծավալով, մատչելիության ու գիտականության աստիճանով և մի շարք այլ գործոններով: Բոլոր հնարավոր դասերը պետք է անցկացվել դպրոցի համակարգչային դասասենյակում աշխարհատեղեկատվական ուսումնական համակարգերի կիրառմամբ: Դրանց մենք արդեն իսկ անդրադարձել ենք:

Այժմ օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում դասավանդման ավանդական մեթոդների և եղանակների հետ համատեղ աշխարհագրության դասավանդման մեջ ներդնել ուսուցման ժամանակակից փոխներգործուն մեթոդներ և եղանակներ, որոնք նպատակ ունեն բարձրացնելու ուսուցանվող նյութի յուրացման արդյունավետությունը և հնարավորություն են ընձեռում ուսուցիչներին ուսուցման կազմակերպման դաս-դասարանային եղանակի պայմաններում կիրառելու տարբեր հնարքներ՝ դասավանդման պրոցեսն առավել հետաքրքիր դարձնելու համար: Այդ նպատակով դասերը բաժանում ենք երեք փուլի՝ խթանման, իմաստի ընկալման և կշռադատման: Իսկ արդյունավետության համար կարող ենք կիրառել «Պրիզմա», «Ձնագնդի» և «Մտագրոհ» մեթոդները[20]:

---

[18] Մանասյան Մ., Վարդանյան Թ., Հովսեփյան Ա., Գրիգորյան Ա., Սարգսյան Խ., Պոտոսյան Ա. «Աշխարհագրություն: 11-րդ դասարան» Դասագիրք, Երևան, «Զանգակ» Հրատ., 2023., 176 էջ, 102-154 էջեր

[19] Մանասյան Մ., Հովսեփյան Ա., Պոտոսյան Ա. «Աշխարհագրություն: 12-րդ դասարան» Դասագիրք, Երևան, «Զանգակ» Հրատ., 2023., 128 էջ, 74-80 էջեր

[20] Մանասյան Մ., Հովսեփյան Ա. «Աշխարհագրություն-9. Հայաստան». Ուսուցչի ձեռնարկ: Երևան, «Տիգրան Մեծ» Հրատ., 2014., 88 էջ, էջ 4-5:

«Պրիզմա» մեթոդի հիմնական նպատակը ներկայացվող երևույթի, հասկացության, գաղափարի վերաբերյալ ենթագիտակցական ոլորտի եղած ասոցիատիվ կապերի վերհանումն ու արձանագրումն է: Դրա միջոցով հնարավոր է ընկալել բնական երևույթի կամ օբյեկտի տարածական կամ բաղադրիչային կապերի տրամաբանական և համակարգված շղթաների ստեղծման միջոցով:

«Զնագնդի» մեթոդը թույլ է տալիս ապահովել մասնակիցների կարծիքների փոխանակում, ընտրություն, հավաքում և խմբի գաղափարների կազմում: Անցկացվում է սկզբում փոքր՝ 2 հոգանոց խմբերով, որոնք հետո միանում են և կազմում 4 հոգանոց խմբեր, ապա 4 հոգանոց խմբերը միանում են և կազմում 8 հոգանոց մեծ խմբեր: Այս մեթոդի հնարը յուրաքանչյուր մասնակցին խմբում և բնական որևէ երևույթի կամ օբյեկտի, դրանց բնորոշ բնապահպանական խնդրին ուսումնասիրության դասին ներգրավելն է:

«Մտագրոհ» մեթոդը թույլ է տալիս փոխանակվել գաղափարներով: Ուսուցիչն առաջին հերթին ընդգծում է, որ ցանկացած միտք, թեկուզ անվստահ արտահայտված, խրախուսվում է: Այս մեթոդի սկզբունքային առանձնահատկությունն այն է, որ չի կարելի մտքերի վերաբերյալ քննադատական կամ գնահատական արտահայտող տեսակետներ հնչեցնել: Մեթոդի հիմնական նպատակը աշակերտների ուշադրությունը տվյալ նյութի վրա կենտրոնացնելն է, նոր գաղափարներ «բացահայտելը»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով մեր կողմից կատարված աշխատանքի արդյունքները՝ նշենք, որ բնապահպանական հիմնախնդիրները կարգավորման և դրանց հանդեպ պատասխանատու վերաբերմունքի ձևավորման շրջանակներում անքննելի է «Աշխարհագրություն» առարկայի դասավանդումը: Մեր տեսական և գործնական ուսումնասիրությունների արդյունքներով կարող ենք եզրակացնել, որ, անմիջականորեն կապված լինելով բնապահպանության հետ, «Աշխարհագրություն» առարկայի շրջանակներում ուսուցչի համար պարտավորություն է առաջանում գրեթե յուրաքանչյուր թեմայի շրջանակներում, որտեղ քննության են առնվում բնական պայմանները, ռեսուրսները, որոշակի անդրադարձ կատարել դրանց ներհատուկ բնապահպանական հիմնախնդիրներին, ընդգծել դրանց համատեքստում մարդածին գործոնները և առաջադրել լուծման ուղիներ: Այդ լուծման ուղիներում պետք է շեշտը դնել մարդու անմիջական ազդեցությամբ բնապահպանական հիմնախնդիրների սրման և, հակառակը, այդ ազդեցության հնարավոր մեղմման վրա: Այս գործիքակազմը թույլ կտա ուսուցչին «Աշխարհագրություն» առարկայի շրջանակներում սովորողներին տալ բնապահպանական կրթություն և կերտել պատասխանատու անհատներ: Դասընթացի արդյունքում սովորողը պետք է գիտակցի, որ իր ամենօրյա գործունեության մեջ ներառված են բոլոր այն տարրերը, որոնք այս կամ այն կերպ կարող են վնասել բնությանը: Ուսուցչի խնդիրն է սովորողին տանել այն գիտակցմանը, որ ինքը պատասխանատու է բնության ներկա և ապագա պայմանների համար:

Մեր աշխատանքում ուսումնասիրվող բոլոր դասարաններում վերը բերված մեթոդների կիրառման միջոցով ուսուցիչն ապահովում է «Աշխարհագրություն» առարկայի շրջանակներում բնապահպանական կրթություն և դաստիարակություն՝ ձևավորելով բնապահպան քաղաքացի: Առաջարկում ենք դասերի արդյունքներն ամրապնդելու նպատակով համար «Աշխարհագրություն» առարկայի շրջանակներում կազմակերպել դպրոցական և արտադպրոցական շրջակա միջավայրի մաքրման աշխատանքներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Մասնագիտական գրականություն

1. Հովսեփյան Ա.Ա., Գրիգորյան Ա.Թ., Մանասյան Մ.Գ. «Աշխարհագրություն 6». Հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք, Եր., «Աստղիկ» գրատուն, 2023., 160 էջ
2. Մանասյան Մ., Մարգարյան Ռ., Հովսեփյան Ա., Հովհաննիսյան Գ. «Աշխարհագրություն (Հասարակական աշխարհագրություն: Տարածաշրջաններ և պետություններ)»: Հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրք: Մաս 1 և Մաս 2, Եր., «Մանմար», 2020., 112 էջ և 120 էջ
3. Մանասյան Մ. «Աշխարհագրություն (Հայաստան)»: Հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի դասագիրք: Մաս 1, Եր., «Տիգրան Մեծ», 2020., 112 էջ
4. Մանասյան Մ., Հովսեփյան Ա. «Աշխարհագրություն-9. Հայաստան». Ուսուցչի ձեռնարկ: Երևան, «Տիգրան Մեծ» Հրատ., 2014., 88 էջ, էջ 4-5:
5. Մանասյան Մ., Վարդանյան Թ., Հովսեփյան Ա., Գրիգորյան Ա., Հովհաննիսյան Գ., Պոտոսյան Ա. «Աշխարհագրություն: 10-րդ դասարան» Դասագիրք, Երևան, «Զանգակ» Հրատ., 2017., 224 էջ
6. Մանասյան Մ., Վարդանյան Թ., Հովսեփյան Ա., Գրիգորյան Ա., Սարգսյան Խ., Պոտոսյան Ա. «Աշխարհագրություն: 11-րդ դասարան» Դասագիրք, Երևան, «Զանգակ» Հրատ., 2023., 176 էջ
7. Մանասյան Մ., Հովսեփյան Ա., Պոտոսյան Ա. «Աշխարհագրություն: 12-րդ դասարան» Դասագիրք, Երևան, «Զանգակ» Հրատ., 2023., 128 էջ, 74-80 էջեր
8. Վարդանյան Թ., Պոտոսյան Ա., Ասատրյան Վ., Հակոբյան Լ. «Աշխարհագրություն»: Դասագիրք 7-րդ դասարանի համար.- Եր,: «Աստղիկ» Գրատուն, 2023., 176 էջ
9. Վարդանյան Թ., Պոտոսյան Ա., Ասատրյան Վ., Հակոբյան Լ. «Աշխարհագրություն: 7-րդ դասարանի դասագրքի մեթոդական ուղեցույց».- Երևան, «Աստղիկ» գրատուն, 2023., 69 էջ, էջ 3:
10. Беловолова, Е. А. География: формирование универсальных учебных действий: 5-9 классы: Методическое пособие / Е. А. Беловолова. — М.: Вентана-Граф, 2015. — 224 с., с. 49.
11. Буланова-Топоркова Н.А., Духанева С.В. Педагогические технологии. М.: Просвет, 2014., 244 с., с. 59.
12. Гакаев, Р. А. Образовательные технологии на уроках географии в условиях современной школы // Образование и воспитание. — 2015. — № 3 (3). - С. 4- 7.

13. Ивенищева Н.А. Методика обучения географии: практикум для академического бакалавриата.- Оренбург: ИП Самарцев В.М., 2017., 96 с., с. 29.
14. Кузнецова Н. И. Глобальные проблемы современности как угроза экологическойбезопасностиРоссии // ИзвестияЮго-Западногогосударственногоуниверситета. Серия: Историяиправо. 2022. Т. 12, № 3. С. 106-115.
15. Методологиянаучныхисследований: учебноепособиедляучрежденийвысшегообразования / Е.В. Пустынникова—Ульяновск, УлГУ, 2017., 129 с., с. 43.
16. Методика преподавания обществоведческих дисциплин: учебное пособие; авт.-сост. Т.И. Барсукова. – Ставрополь: СКФУ, 2016. – 189 с., с. 49.
17. Палманова Ж. Современные инновационные методы преподавания географии в общеобразовательных школах: "Экономика и социум" №1(80) ч.2 2021., с. 310.
18. Савин Н.В. Педагогика. М., 2018., 276 с., С.217.

Համացանցային աղբյուրներ

19. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն որոշումը. Հասանելիությունը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 (Վերջին մուտքը՝ 22.09.2023., ժամը 19:24)
20. «Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Աշխարհագրություն» առարկայի 7-8-րդ, 10-12-րդ և «Հայաստանի աշխարհագրություն» առարկայի 9-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 30 մարտի 2023 թվականի N 24-Ն հրամանը.Հասանելիությունը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=176078 (Վերջին մուտքը՝ 22.09.2023., ժամը 20:19)